

Այլ եւ նախ քան գլխաւորեանք օր ազգութեան ուրախութեան լինի ննջեցելոյն հոգւոյ, յորժամ կենդանիք վասն նոցա պատարագս կամ աղօթս կամ ողորմութիւնս մատուցանեն առաջի Աստուծոյ»⁴:

Մեկնութիւն

1. — Ս. Սեղանին վրայ մատուցուած պատարագը նոյն փերագոյն Ձոհն է՝ զոր Քրիստոս Գողգոթայի խաչին վրայ նուիրեց իր երկնաւոր Հօր: Ահա թէ ինչո՞ւ մեծ եւ անհաս է Ս. Պատարագին զօրութիւնը:
2. — Ուրեմն, ինչպէս որ Քրիստոսի պատարագը ջնջեց բոլոր մարդկութեան մեղքերը, բոլոր Աղամածին սերունդին յանցանքները, նոյնը այժմ ալ կարող է սրբել ննջեցեալի մը մեղքերը:
3. — Զկայ մեղք՝ որ չնեւորի երկնաւոր Հօրմէն, ի տես Քրիստոսի պատարագին, զոր կը նուիրագործեն Եկեղեցւոյ պաշտօնեաները:
4. — Ս. Պատարագը կը մատուցուի «յանուն քրիստոսեայ ննջեցելոյն», այսինքն՝ եղականաբար կը յատկացուի մէկ ննջեցեալի հոգւոյն փրկութեան. եւ այս դիտումով կատարուած պատարագը կըրնայ կրկնուիլ նաեւ «բազում անգամ»:
5. — Ս. Պատարագի միջնորդական զօրութիւնը մեծ է. բայց՝ եթէ երկնաւոր Հայրը պատրաստ է ներելու, միւս կողմէ պէտք է որ ննջեցեալի հոգին ալ ատակ ըլլայ թողութեան: Թողութեան պայմանները երկու են. ուղիղ հաւատք եւ զղջում՝ նախ քան մահը:
6. — Ս. Պատարագի հօր միջնորդութեամբ ննջեցեալին հոգին կը հրճուի իսկոյն, այսինքն՝ անմիջապէս անոր հոգւոյն վրայ կ'աղղէ Քրիստոսի Ս. Ձոհը, բաժանային կողմէ վերանորոգուած: Պատարագի արդիւնքը անմիջական է. «նախ քան գլխաւորեանք օր» Շնորհալիի բաներով:

4. Սեղ:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

«Յանախապատում»-ի վարդապետութիւնն է որ հետզհետէ աւելի կը մանրամասնուի ու կը բացատրուի դարերու ընթացքին: Շնորհալիի քով այլեւս մութ կէտ չի մնար:

Մանդակունիի քով տեսանք ննջեցեալին եղականաբար յիշատակութիւնը՝ ահեղ խորհուրդի արարողութեան պահուն: Եղիշի քով «յանուն հրաժարելոյն» մատուցուած աղօթքն ու պատարագը բացայայտ էր: Արքայաժամ Մամիկոնէից Եւփակոպոսի բնադրին մէջ նշմարեցինք սուրբ պատարագին անմիջական ազդեցութիւնը հաւաստող տղերք: Երեք տարբեր, որոնք եթէ սաղմնային ու քողարկուած ձեւով կը ներկայանային յիշեալ հեղինակներուն քով, այժմ Շնորհալիի զրչին տակ կ'առնեն բացայայտ երանք եւ արտայայտութիւն: Ս. Պատարագը կը մատուցուի «յանուն ննջեցելոյն», այսինքն ի նպատակ. ոչ պարզապէս ընդհանուր յիշատակութիւն ննջեցեալներու կամ ննջեցեալի, ինչպէս կ'ուզէր հաւաստել Գարեգին Պարթ. Սաշատուրեան, այլ նուիրում բովանդակ սուրբ Պատարագին ի շահ եւ ի հանդիստ ննջեցեալի մը. եւ այն՝ նաեւ յաճախակի:

Երկրորդ ցայտուն կէտը՝ Ս. Պատարագի անմիջական արդիւնքն է, որ շատ բացայայտ կերպով ներկայացուած է Շնորհալիին: Ասկէ քանի մը տարի առաջ, հանդուցեալ Փառէն Սրբազան, հերքելով քաւարանի գոյութիւնը, կը պատգամէր թէ Հայաստանեայց Եկեղեցին ննջեցեալներու համար այն խմաստով միայն կ'աղօթէ՝ որ Աստուծոյ զթայ անոնց՝ Քրիստոսի վերջին դաշտեան եւ աշխարհի կատարածին օրը⁵: Խեղճ Սրբազանը, թէեւ իր խոր ծերութեանը հասած, կ'երեւի տակաւին չէր կարդացած Շնորհալիին այս լուսաշող տղերքը, որոնք բացայայտ կ'աղաղակեն թէ «նախ քան գլխաւորեանք օր ազգութեան

5. Հասկ. ԺԵ. (1946, թ. 9-10) էջ 250: ԺԵ. (1948, թ. 10) էջ 263:

ուրախութեան լինի ննջեցելոյն հոգւոյ, յորժամ կենդանիք վասն նոցա պատարագս կամ աղօթս կամ ողորմութիւնս մատուցանեն առաջի Աստուծոյ»:

Մեր մեկնութեան մէջ այլեւս հարկ չենք տեսներ կրկնել կէտեր, ինչպէս հաւատքի եւ զղջումի հարկաւորութիւնը՝ թողութեան արժանանալու համար (հաւատք եւ զղջում՝ դոնէ մահուան անկողին մէջ, մեռնելէն առաջ իրականացած), որոնք «Յաճախապատում»էն մինչեւ Շնորհալի յաճախակի յիշեցեալ եւ մեր եկեղեցական գրիչները, ինչպէս մէկիկ մէկիկ ներկայացուցինք նախորդ երկու յօդուածներով:

Այսպէս, Շնորհալին՝ ջերմապէս հաւատացող եւ խորապէս տեղեակ ողջերու եւ ննջեցեալներու միջեւ գոյութիւն ունեցող սերտ հաղորդակցութեան, որուն կեդրոնաձիգ լինեոն է Ս. Պատարագը՝ ըստ «Յաճախապատում»ին, կը մնայ Հայաստանեայց Եկեղեցւոյ դարաւոր աւանդութեան պատմէջին վրայ, զոր իրենց կարգին պաշտպանած են Անձեւացիներն ու Նարեկացիները, ինչպէս տեսանք:

Ու ցաւով սրտի մենք դարձեալ, բայց այս անգամ աւելի եւս հաստատուած մեր կարծիքին վրայ ու կառչած անոր ուժգին, կու գանք կրկնել՝ թէ Գարեգին Պարթ. Սաշատուրեան հեռացած է Հայաստ. եկեղեցւոյ հարապատ վարդապետութենէն, որը հանդիսապէս ու պաշտօնական հեղինակութեամբ յայտարարած է թէ Ս. Պատարագը կը մատուցուի մի միայն ողջերուն համար, եւ ոչ թէ մեռելոց կամ նրմալից քեցեալներու համար⁶:

Այս առիթով կու գանք յայտարարել որ մեր պրպտումը մեր սպասածէն ալ աւելի հեռու տարու մեղ. դրական փաստերը եւ կան ո'չ միայն հերքելու Գարեգին Պարթ. ի յիշատակէ մը ասղին ուրիշներ ալ զոր յիշատակէ մը ասղին ուրիշներ ալ իրմէ առաջ ըսած էին, այլ նաեւ Շնորհալիի քով յայտնուեցաւ բացայայտօրէն

քաւարանի գոյութիւնը հաւաստող վկայութիւն մը, որ աղօթ կերպով ներկայացուած էր նաեւ Ձ. դարուն, Արքայաժամ Մամիկոնէից Եպսկ. ի նամակին մէջ, ինչպէս տեսանք նախապէս:

Բայց քաւարանի մասին առանձնապէս պիտի խօսինք ուրիշ առիթով:

9.

Ս. ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՅԻ

«Մեկնութիւն խորհրդոյ Պատարագին» խորագրերը կրող ընդարձակ դրքին մէջ Ս. Ներսէս Լամբրոնացի երկարօրէն կը խօսի մեր այս հարցին շուրջ, զանազան զուգահեռութեամբ: Նախ «Յաղագս եկեղեցւոյ» բաժնին մէջ հարց կը դնէ թէ «Ուստի՞ եւ մուտ այս սովորութիւն՝ գլխատակ մեռելոցն ի պատարագն խնդրել, եւ է՞ր վասն»:

Եւ քիչ վերջ, աւելի եւս խորանալով ու մանրամասնելով կը յաւելու «խորհրդածութիւն ի նոյն եւ վասն նորին»:

Եւ կրկին անգամ նոյն նիւթին կը դառնայ Ս. Պատարագի բուն մեկնութեան ընթացքին, ննջեցեալներու յիշատակութեան աղօթքներուն խմաստը բացատրելով:

Լամբրոնացի ամէնէն առաջ կը պայքարի իր օրով շատ ընդհանրացած սխալ ըմբռնումներու դէմ. իր խիստ խօսքերէն կը յայտնուի որ ԺԲ. դարուն արժատացած էր Հայոց քով ննջեցեալներու անունին պատարագ մատուցանելու սովորութիւնը. եւ այն աստիճանի ծաւալած էր այս սովորութիւնը, որ շատեր, ծայրայեղութեան անցնելով, կը կարծէին թէ Ս. Պատարագը ո'չ այնքան ողջերու՝ որքան ննջեցեալներու համար է որ կը մատուցուի. կային նաեւ որ կը կարծէին՝ թէ մարդ ո'րքան ալ շատ ու ծանր մեղքեր զործած ըլլայ այս աշխարհի վրայ, կը բաւէ որ դրամ թողած կամ նուիրատուութիւն կատարած ըլլայ՝ որ իր հոգւոյն համար շատ պատա-

6. Շողակաթ, Է. (1958, թ. 4-5) էջ 150-153:
7. Ս. Ներսիսի Լամբրոնացւոյ... խորհրդածութիւնի կարգս եկեղեցւոյ եւ մեկնութիւն խոր-

խորհրդ Պատարագին, տպ. Վենետիկ, Ս. Ղազար, 1847, էջ 168-170, 171-180, 405-417, 427-432:

բազմաբան, անդին իր յաւիտեանական փրկութիւնը ապահոված կ'ըլլայ, Հետեւաբար, շատեր չար ու անապաշխար կեանք մը կը վարէին, մանաւանդ հարուստներ, բոլոր իրենց յոյսը դնելով յետ մահու պատարագներուն վրայ. անոնք առատ նուէրներ կամ ազարակներ կը կտակէին վանքերուն, կարծելով աշխատեցողներէն արքայութիւնը: Միւս կողմէ պակաս չէին նաեւ անարժան եկեղեցականներ, որոնք կը շահագործէին այս մտածելակերպը՝ իրենց դրամասիրութեամբ:

Նիւթապաշտ ըմբռնումը այն աստիճանի ծաւալած էր, որ ոմանք մինչեւ անդամ թանձրամտորէն կը կարծէին թէ դրամով կարելի է պատարագը գնել կամ սեփականել անոր արդիւնքը իրենց ննջեցեալներու անունին, եւ կամ, յետ մահու, իրենց իսկ անունին ամբողջովին յատկացնել դայն ու մատուցանել:

Այսպիսի մտայնութեան դէմ է որ կը ծառանայ Լամբրոնացիի բարձրագոյն ազդակը, յայտարարելով թէ մահէն վերջ՝ պատարագը օգուտ չունի, թէ պատարագը ննջեցեալներու համար չէ, թէ պատարագը չի մատուցուիր «յանուն ննջեցելոյն»:

Այս բոլորը ահա նկատի առած՝ պէտք ենք լրջօրէն եւ մեծ առարկայականութեամբ մօտենալ Լամբրոնացիի ճառերուն, որոնք շատ ալ ընդարձակ են, թափանցելու համար անոնց խորը եւ պարզաբանելու համար անոնց հարազատ իմաստը. այս նպատակով՝ պիտի ջանանք այստեղ ամփոփել զլիաւոր ու յատկանշական կէտերը, համեմատելով նախորդ դարերու աւանդութեան հետ:

1. — Նախ քան պատարագի խորհուրդին բուն մեկնութիւնը, եկեղեցւոյ եւ ազօթքի մասին տրուած զանազան խորհրդաձուլութիւններու կարգին՝ նորամուտ սովորութեանց դէմ է որ կը կանգնի Ս. Ներսէս Լամբրոնացի, յիշեցնելով հնամենայ ու նուիրական աւանդութիւնը, որուն հարկ է հետեւիլ:

«Սովորութիւնս այս ի սրբոց անտի ա-

ւանդեցաւ յառաջնոցն հարցն երանելեաց, ըստ որում պատմութեանցն ուսուցանեն բանի. բայց ուղիղ մտօք եւ ոչ ստերիւրեալ կարծեօք, որպէս այժմ բազում տեսանեն. այսինքն զի պատարագն հարկաւորապէս մատչի Աստուծոյ, եւ յանուն Աստուծոյ յանձն արարին զինքեանս՝ որպէս կենօք, նոյնօրինակ եւ յետ մահու յիշել, եւ ոչ եթէ գիտաբանաց փրկանս միայն յինքեանս գրաւեցին, կամ զԱստուած փոխանակ մարդոյ տրից հատուցին կամ յանուն մարդոյ նիւթեցին զհնազանդեալն Հօր մահու չափ եւ մահու խաչի, եւ ի նորա յանունն մեռեալ»⁸:

Ու քիչ վերջ, աւելի կուռ կերպով կ'ամփոփէ նոյնը.

«Աւանդութիւնս ի սրբոցն է՝ ի պատարագն յիշել զննջեցեալսն. բայց ոչ այսպիսի սովորութեամբ՝ ի մեռելոցն յանուն զնոյն կատարել, եւ ի վաճառաշահութիւն գրիստոս ձգել, եւ կենօք հեղգանալ, եւ յետ մահու ի սոյն ապահովել. նա դարձեալ եւ ոչ գայս լուծանել կամելով՝ անպտուղ գմեռեալսն յօգնականութենէ խրնդրուածոցն կարծել կամ գրկիլ ի յիշատակելոյն ի պատարագս»⁹:

Յստակ է Լամբրոնացիի միտքը՝ թէ սուրբ պատարագը Աստուծոյ կամ յանունն Աստուծոյ կը մատուցուի, որով չէ կարելի դայն դրամով սեփականել եւ ննջեցեալի մը անունին մատուցանել. միւս կողմէ, սակայն, բացայայտ է թէ ննջեցեալները մեծապէս կ'օգտուին սուրբ պատարագին մէջ իրենց ի նպաստ եղած յիշատակութեան:

2. — Եւ ահա Լամբրոնացի կ'անցնի մեկնելու Գողգոթայի զոհին ազդեցութիւնը՝ ողջերու եւ ննջեցեալներու վրայ. կը յիշատակէ վկայութիւններ Նոր Կտակաբանէն, լիմպոսի հոգիներուն փրկութիւնը, եւ հուսկ կ'եզրակացնէ.

«Հարկաւորապէս յիշէ միջնորդութեամբ Քրիստոսի առաջի Հօր քահանայն՝ զկեն-

8. Անդ, էջ 168:

9. Անդ, էջ 168-169:

դանիս ամենայն ըստ իւրաքանչիւր կարգի եւ աստիճանի, յետ այնորիկ եւ գմեռեալսն. հաւատամք դարձեալ օգտել յազօթից նորա ըստ իւրաքանչիւրոցն հաւատոց եւ յուսոյն՝ կենդանեաց եւ մեռելոց: Եւ գայս ընծայս տալ Աստուծոյ ի ձեռս նորա՝ յուսոյ է պտուղ եւ հաւատոյ. քէ կենդանի տալ վասն իւր հաւատով, առնու ըստ չափոյ սիրոյն. եւ քէ վասն մեռելոյ, եւ մեռեալ վասն իւր առնու եւ նա յԱստուծոյ հատուցումն՝ որպէս տեսանէ Աստուած զհաւատս նորա»¹⁰:

Հետեւաբար Ս. Պատարագը ոչ միայն ողջերուն, այլ նաեւ ննջեցեալներուն, կամ նաեւ ննջեցեալի մը համար ալ (Լամբրոնացի այս անգամ եզրականաբար կը խօսի) հատուցողական ազդեցութիւն մը ունի:

3. — Սակայն միշտ դատապարտելի է տուրեւաոր այս նուիրական պարագաներուն, ուր շահավաճառութիւնը նշան է հաւատքի պակասին:

«Իսկ նշան հաւատոցն ո՞ր է. ոչ առնել տուրեւառութեան համարս եւ շահավաճառութիւն եւ ջան առ ի գրկել եւ գրիսն բազմացուցանել. այլ տալ գպտուղ սիրոյն, որպէս ետ պտուղիկն զիւղն եւ կցորդն մին՝ զարտասուսն: Ոչ բնաւ գայս գմեռեալ ածել՝ քէ կա՛ գայս քեզ, եւ փոխան մին՝ պատարագէ՛ գրիստոս ինձ. այլ քէ՛ զի պատարագի Քրիստոս ի ձեռն քո ինձ ի փրկութիւն, նախ քան զիմս տալ՝ արժանի լիցի այս իմ նուէր՝ նորին քի պաս պիտոյից. եւ ոչ բնաւ անհաւատութեան տալ կարծիս՝ համարս պահանջելով»¹¹:

Շատ զեղեցիկ է Լամբրոնացիի պատճառաբանութիւնը եւ բացատրութիւնը. նրաբանութիւնը է որ կ'օգտուի սուրբ պատարագին անսահման արդիւնքներէն. եւ այդ՝ ոչ թէ դրամ տուած ըլլալուն համար, այլ ոչ թէ դրամ տուած ըլլալուն համար, այլ ոչ թէ որովհետեւ Քրիստոս ինքզինք կը զոհէ բոլորին համար. ուրեմն հաւատացեալը պէտք է ուշադիր ըլլայ որ իր նուէրը ար-

ժանի ըլլայ այս մեծ ու զերազոյն բարիքին, ու չեղծանէ իր նուէրին սրբազան բնոյթը՝ աւելորդ սակարկութիւններով:

4. — Հաւատքի այս պակասն է իսկապէս արժատը այն սխալ մտայնութեան եւ նիւթապաշտ ըմբռնումին.

«Հաւատն պակասեաց յաշխարհէս, եւ մոռացան քէ կենդանեաց փրկանք է պատարագս, եւ ի նոցանէ պահանջէ զիւր ընծայաբերութիւնն. այլ ամենեքեան կենօք անհաւատ եւ աննուէր սորա, յետ մահու հաւատան ի փրկութիւն եւ տա՛ն գմեռելուն... այս արագաւ ի տուրեւառութիւն անկաւ շնորհս, եւ ի քուականութիւնս քահանայութեան. որով գտաւ ի մէջ մեր անբերելի անկարգութիւն, զի մի՛ ասացից՝ անօրէնութիւն. քանզի ծանուցեալ եկեղեցւոյ վերակացուք քէ ըստ բազմութեան քուոցն է եւ վարձն, եւ ի պէտս արժաքսիրութեան, բազմացուցին ի մի տեղ՝ տասն աւելի կամ պակաս ծակոտեալ մատրոնս խորանօք եւ սեղանովք. ըստ նմին եւ քահանայք քուոցն լցուցիչք եւ զվարձսն առատացուցիչք»¹²:

Հաւատքի պակասէն՝ դրամասիրութեան ախտը կը ծաւալի դժբախտաբար եկեղեցականութեան մէջ, որոնք փոխանակ վերանորոգելու սուրբ հաւատքը՝ վաճառաշահութեան կը ձեռնարկեն: Լամբրոնացի կ'ողբէ արժատաքի ջնջել այս ծայրայեղ ըմբռնումը, եւ կը պատգամէ թէ սուրբ պատարագը ողջերու համար է զլիաւորաբար. «Որ վասն ձեր բաշխի» ըսած է Քրիստոս յայտնապէս իր առաքեալներուն. «Արիւնն Յիսուսի արբէ գմեղ յամենայն մեզաց» յայտարարած է Առաքեալը:

Ապաշխարութեան եւ քրիստոնէական սուրբ կեանքի յորդորելու մեկնակէտ կ'անէ Լամբրոնացին պատարագի խորհուրդը, որպէսզի չարքը իրենց յոյսը ունայն տեղ չդնեն յետ մահու ազօթքներուն վրայ: Այսպիսի պարագայի մէջ է

12. Անդ, էջ 178:

10. Անդ, էջ 170:

11. Անդ:

որ Լամբրոնացի կը ցայտեցնէ Ս. Պատարագին դերը եւ ազդեցութիւնը ողջերու համար:

5. — Այս բոլորը դարձեալ համադրելով վերստին կը յեղեղէ Լամբրոնացին՝ Ս. Պատարագի ազդեցութիւնը բուն մեկնութեան մէջ, երբ կարգը կու գայ ննջեցեալներու յիշատակութեան:

«Նախ եւ առաջին կենդանիս դասեցան ի հայցուածս, եւ ապա ննջեցեալքն, եւ այն սուրբքն եւ արդարքն, որովհետեւ նշգրտապէս հաստատի նշմարութիւնն եւ յամօք լինի ունայնաձայնութիւնն այնորիկ՝ որք գայս բարձրագոյն շնորհս ի պէտս մեռելոց միայն համարին եւ բաշխեն, ընդ որով տեսանեմք մոլորութեամբ այսօր գրագումն գրաւեալ, այսինքն զի չիք ունեւ յոյս ի ժամանակիս յայսմիկ չարի ի մէջ մեր՝ վասն իւր փրկութեան ընծայաբեր լինելոյ յեկեղեցի, կամ յայս փրկանաց՝ թէ շնորհ ընդունի հաւանիլ. այլ զի՞նչ. կամ տայ գոիծտ եւ գնիշտ տուրսն ի պէտս մեռելոց, եւ գաւկ հաւառոյն վաճառողն ի շնորհավաճառացս ի մէջ նշտի պահանջէ. եւ կամ տայ կեօօք, եւ ի կեանսն անյոյս է ամենեւին յԱստուծոյ. վասն այնորիկ գտանել ողորմութիւն, այլ գրով եւ հաստատութեամբ յետ մահու անստերիւր գրիսն ունել աղերսէ: Ո՛րք թշուառ եւ անբան իմաստութեանս. ո՛րքան տեսանեմք թիւր ընթացք թերահաւատութեան ի մէջ աշխարհի»¹³:

Եթէ նախորդ հատուածին մէջ Լամբրոնացի բացատրեց թէ Ս. Պատարագը գլխաւորապէս ողջերու համար է, այս վերջին հատուածով կ'ամբողջանայ անոր տեսակէտը՝ թէ մոլորութիւն է կարծել որ Ս. Պատարագը ննջեցեալներու համար միայն կը մատուցուի. ասով յայտնապէս կ'ընդունի Լամբրոնացի թէ Ս. Պատարագը կը մատուցուի նաեւ ննջեցեալներու համար. կէտ մը որ էական է մեր հարցին համար:

6. — Լամբրոնացիի համար կենսական

է նիւթապաշտ ըմբռնումը ջնջել. որով չի դադրիր կրկնել:

«Զի՞նչ առաւելութիւն աղօթիցս մեռելոց քան կենդանեաց, ցոյց եւ յամօք արագնշմարտութիւնն. ապա հասարակաց բաշխի շնորհս, եւ առաւել նախադասութեամբ՝ կենդանեաց քան մեռելոց, ունայնահաւատ, զառանց գնոյ ձիւս ո՞յր աղագաւ ի գինս ձգել յօժարիս, տաս Աստուծոյ եւ ոչ հաւատաս՝ թէ գրածակ ջուրն աշակերտացս արբուցեալ ի քէն՝ ոչ թողու առանց վարձու, այլ յինէն հաւատարմութիւն պահանջես, մանաւանդ թէ եւ զիս Աստուած կարծես, զի ասացից ինչ եւ ծաղրականս, քանզի տրոցն գոր Աստուծոյ ասես տալ, յինէն՝ որ մարդ եմ՝ համար եւ հատուցումն խնդրես»¹⁴:

Հոս ալ կենդանեաց եւ մեռելոց բացատրութիւնը կու գայ յատկել Լամբրոնացիի միտքը, որ չի շեղիր «Յաճախապատում»-ի վարդապետութենէն. հասարակաց բաշխի շնորհս կ'ըսէ, եւ դարձեալ կը պանծացնէ Ս. Պատարագին անդին արժէքը:

7. — Աւելի եւս խորանալով՝ Լամբրոնացին կը վերլուծէ Ս. Պատարագի ազդեցութիւնը՝ որոնք մեծ մասով ողջերու համար են. եւ ասիկա շարժառիթ կ'առնէ ցնցելու համար ծոյլ ու հեղզ մեղաւորները եւ զանոնք ապաշխարութեան յորդորելու:

«Ո՞ր մեռեալ խաղաղութեան աշխարհի կարօտի... ո՞ր մեռեալ թագաւորութեամբ տիրէ, ո՞ր մեռեալ իշխանութիւն վարէ. ե՞րբ է նոցա ժողովումն, ե՞րբ բանապարհորդութիւն, ե՞րբ նաւաստութիւն, ե՞րբ աշխատութիւն, ե՞րբ ընդդէմ բարքարտաց մարտակցութիւն. զի՞նչ օգուտ է նոցին օդոց բարեխառնութիւն, կամ ո՞ր շահ յանդոց պտղաբերութեմէ, կամ ե՞րբ գոյնոցին ախտին առողջութիւն: Զայս ամենայն բն վասն՝ որ կենդանի ես՝ թախանձէ քահանայս... իսկ յայսքան շնորհս Քրիստոսի վայելեալ ի ձեռն նորա, ոչ միայն

անշնորհակալ լինիս, այլ եւ ի փոքր եւ ի չնչին տուրսն զնա ընդ աստուածավաճառութեան յանցանօքն ձգես, եւ դու որպէս նշտագնող շնորհացն՝ համարս պահանջես, եւ որ այսքան եւ այսպիսի օրինակաւ զՔրիստոսի պատարագս ուղեկից քեզ ունիս յամենայն ընթացս եւ գորավիզն, միշտ անհաւատ եւ անյոյս մնաս կեօօք ի սմանէ, եւ յետ մահու ի գերեզմանն ունել բաղրադես»¹⁵:

8. — Հուսկ Լամբրոնացի կ'եզրակացնէ թէ Ս. Պատարագի տիեզերական արդիւնքները չէ կարելի գնել, կամ անոնց վրայ սակարկել ու մի միայն մէկ հոգիի վրայ սահմանափակել:

«Արդ եթէ նա այսպէս առատացեալ է յիւր պաշտօն սպասաւորութեանն՝ միշտ եւ յամենայն ընթացս բն աղօթիւքն օգնելով, դու գայն սակաւ պտուղն գոր ունիս աղօթիւքն նորին, եւ պաշտպան լինիս մարմնական պիտոյիցն, անհաւատութեամբ վաճառես նմին, եւ համարս պահանջես, եւ գպատարագն Քրիստոսի՝ որ գտիեցես փրկէ՝ քեզ միայն տաս գրել եւ համարիս: Նա վասն կարօտութեան մարմնոյն յանցանէ եւ զիջանի զկնի բուժ մոլորութեանը, եւ դու մեծարանես, ունչ առնես, երախտես, եւ հալես գնուէքսն Աստուծոյ երախտիւքն, եւ անվարձ արտաքս գնաս»¹⁶:

9. — Եթէ պատարագը միշտ Աստուծոյ անունին կը մատուցուի, եթէ քահանան միշտ կ'աղօթէ ողջերու եւ ննջեցեալներու համար, մանաւանդ թէ երբ բոլոր տիեզերքը՝ Հայն ու Հոռոմը եւ Փրանկը միասնաբար միեւնոյն Քրիստոսի պատարագն է որ կը կրկնեն, այն ատեն ինչո՞ւ դրամ տալ իբր պատարագուց: Եւ ահա Լամբրոնացին կու գայ բացատրել թէ ի՞նչ իմաստով է որ դրամ կու տանք քահանային (առանց աստուածավաճառութեան) եւ թէ ինչո՞ւ հարկ է տալ. այս անգամ կը դիմէ Պօղոս Առաքեալի խօսքերուն՝ որով կը մեկնէ թէ ինչպէս քահանան ալ, Աստու-

ծոյ նուիրեալ անձ, կարօտ է նիւթական նպաստներու. հետեւաբար, ոչ թէ չահաւաճառութիւն է որ կը կատարուի, այլ նուիրատուութիւն, նիւթական օգնութիւն, որու փոխարէն, քահանան՝ իբր մարդ եւ միջնորդ՝ սուրբ պատարագի ազդեցութեան մէջ մասնաւոր յիշատակութիւն մը կը կատարէ նուիրատուին (ողջ կամ ննջեցեալ) համար»¹⁷:

10. — Այս բոլորը, սակայն, հարկ է կատարել մեր ողջութեան ատեն, մեր նուիրատուութիւններուն կցելով նաեւ ապաշխարական գործեր, որովհետեւ, նոյն ինքն ըստ Լամբրոնացիին՝ մոլորութիւն է կարծել թէ «յետ մահու թողութեան յոյս առաք՝ գոր ամենեւին ամենայն ուրեք փակեցին գիրք սուրբք»¹⁸. որով կ'եզրակացնէ. «ամենեւին փակել գոյս քառութեան՝ յետ մահու»¹⁹:

ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆ ՄԸ

Այս վերջին տողերը կու գան, կարծէք, փակելու բոլոր խնդիրը. քանի որ մահէն վերջ չկայ յոյս քառութեան, ուրեմն աւելորդ չէ՞ պատարագի միջոցին ննջեցեալ յիշատակութիւնը:

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

Խուսափելու համար հակասութենէն՝ հարկ է լաւ ըմբռնել եւ զանազանել թէ որոնց համար՝ մեռնելէն վերջ՝ չկայ յոյս քառութեան, եւ ո՞ր տեսակ ննջեցեալներու համար աւելորդ է աղօթքն ու պատարագը, ըստ Լամբրոնացիի:

ա. — Սուրբ Պատարագը չի կրնար օգնել անհաւատ եւ անապաշխար ննջեցեալներուն, որոնք մահուցաւ մեղքերով ծանրաբեռն՝ մեկնած են աշխարհէս. հանդերձեալին մէջ ատոնց համար ապաշխարութեան կարելիութիւն չկայ. ատոնց համար չկայ յոյս քառութեան, չկայ տիրապէս քառութիւն. որով այդ աւաղելի դասակարգին չի կրնար նպաստել Քրիստոսի

15. Անդ, էջ 408-409:

16. Անդ, էջ 410:

17. Անդ, էջ 411-416:

18. Անդ, էջ 178:

19. Անդ, էջ 410:

13. Անդ, էջ 407:

14. Անդ, էջ 409:



անդին արիւնը՝ չի կրնար նպաստել, որովհետեւ կը մնան իրենց անապաշխար եւ յուսահատ վիճակին մէջ, ինչպէս սատանաները:

«Արդ այս է դիտարարութիւն աղօթից եւ պատարագաց՝ գոր տան ի փրկութիւն մեռելոց, գործոց իւրոց գոր ի կեանսն արար՝ օգնականութիւն, եւ ոչ տղայաբարոյ կարծիք թէ մեղացն տիրապէս քաւութիւն: զի մեղացն քաւութիւն զմեզ Գիրք ի կեանս ապաշխարութեամբ ուսուցին գտանել»²⁰:

Բ. — Բայց կան նաեւ մեղքեր, որոնց թողութիւն կը տրուի հանդերձելին մէջ. թեթեւ մեղքերն են ատոնք. մարդիկ՝ որոնք զղջացած են իրենց մահէն առաջ, բայց ապաշխարական գործեր կատարելու ժամանակ չեն ունեցած, եւ կամ՝ չեն ապաշխարած ըստ բաւականի, ատոնք մարժանանան յետ մահու թողութեան. ահա՛ հոս է որ իր բարեբար աղբեցութիւնը կը բերէ սուրբ պատարագը:

Այս կէտին մէջ, Լամբրոնացին վկայութիւններ կը մէջբերէ Դիոնիսիոս աստուածաբանէն, յատկօրէն բացատրելով այս խնդիրը:

«Ամենայնի, ասէ (Դիոնիսիոս), որ ըստ մարդկային տկարութեան մեղուցեալ ննջեցելոյն՝ թողութիւն լինել, եւ կարգել զնա ի լոյս եւ ի դաս կենդանեացն ի գոգն Աբրահամու, Սահակայ եւ Յակոբայ, ի տեղուջ՝ ուստի ի բաց փախուցեալ են տրտմութիւնք, ցաւ եւ հեծութիւնք»: Այսու (կը շարունակէ Լամբրոնացի) առ ի մէջ կանխաւ ասացելոցն կցորդ լինի՝ երանելիս, գանազանութիւն տալով հանգրստաբանաց արդարոցն եւ մեղաւորաց: Զի թէ դաս արդարոցն առանց տրտմութեան են եւ հեծութեան, յայտ է՝ թէ ջոկփ մեղաւորացն ի սոյն վարակին... վասն այսորիկ թէ՛ ի պատարագն խնդրուածք, թէ՛ ի վերայ մարմնոյն աղօթք՝ յայսմանէ գերծանելոյ է հնար ի խաւարային իշխանութենէն եւ ի տրտմութեան վայրէն»²¹:

Լամբրոնացիի այս խօսքերէն յայտնի է որ մէկ կողմէն՝ անապաշխար մեղաւորներու, եւ միւս կողմէն՝ սուրբերու կար-

գիւն հանդէպ երանելիներու դասէն դատ, կայ միջակ խումբ մը յանցաւորներու, որոնք ատեն մը կը չարչարուին՝ մարդկային տկարութեամբ գործած մեղքերու համար (թեթեւ ու ներելի մեղքեր). ապա մեր աղօթքներուն եւ պատարագներուն աղբեցութեամբ կ'ազատին այդ տրտմութեան վայրէն:

Գ. — Մարդկային տկարութեան հետեւանքով բարդուած բիծերն են՝ որ կը մաքրուին քահանային աղօթքով, որ մի միայն կը մատուցուի զղջացեալ մեղաւորներու համար:

«Անոնս առնելով բարեբարութեամբ աստուածայետականի մարդասիրութեան գեղեպն ի նոսա բիծ ի մարդկային տկարութենէ. վասն զի ոչ ոք մահուր յադտայ...: Խնդրէ գայս սրբազան գիտաւորացումն լինել... եւ ոչ ուրեք երբեք խնդրէ քահանայապետն յաստուածայետականին բարեբարութենէ գայն որ ոչն էր Աստուծոյ հանոյ եւ տուեալ լինէր ի նմանէ աստուածային խոստումն. վասն որոյ անսրբազանիցն ննջեցելոցն ոչ առնէ գայս աղօթք»²²:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Խնդրին ծանրութիւնը ստիպեց մեզ երկար դեղերիլ Լամբրոնացիի արծուեթուիչ խորհրդածութիւններուն մէջ՝ հասնելու համար ստույգ եւ դրական եզրակացութեան մը. արդարեւ, հարեանցի ընթերցումը կրնար մեզ խոտորեցնել եւ հակասական լուծումներու առաջնորդել. բայց հարցը կը կայանար ճիշտ այդ հակասական թուած վէտերը մեկնաբանելու մէջ, ջանալով իրարու հետ հաշտեցնել բոլորը, եւ գտնել համադրական ամբողջութիւնը Լամբրոնացիի հարազատ մտքին, առանց խեղաթիւրութեան: Կը համարենք որ ճիշտ ասիկա պակաս է Գարեգին Պարք. Խոստուրեանի, որ իր ուշադրութիւնը սեւեռեր է Լամբրոնացիի մէկ կամ միւս խօս-

քին վրայ, առանց նկատելու խնդրին ամբողջութիւնը եւ յարակից ծաղրերը, առանց քննելու մեծալին երկրորդ երեսը, եւ իսկոյն կաղմեր է եզրակացութիւն մը՝ որ սխալ ու խախտ հիմերու վրայ հաստատուած է:

Լամբրոնացին չի հեռանար մեր նախնայ հաւատքէն եւ անհղութենէն. բայց առաջինն է որ այսքան երկար ու խոր կ'ուսումնասիրէ այս խնդիրը:

1. — Նախ «Յաճախապատում»ին հետ կ'ընդունի մարտիրոսներու եւ սուրբերու դասակարգը, որոնք հանգստեան եւ փառքի մէջ են. անոնց ի նպատակ էթէ երբեք կայ յիշատակութիւն պատարագին մէջ, ատիկա, Լամբրոնացիի համաձայն՝ է փառքի առաւելութեան խնդրուածք մը. «վասնզի թէպէտ եւ փառաւորեցան եւ հանգեան, սակայն եւ ոչ բնաւ ի լրումն փառացն հասին, այլ օրըստօրէ քաղցնումն եւ գառաւելութիւն խնդրեմ, ըստ որում եւ հրեշտակք. քանզի գիտութիւն է որ բաշխի նոցա եւ յուսափայլութիւն յԱստուծոյ եւ այստեղիւ հոգի եւ ոչ բնաւ յագեցան»²³:

Խոսքով Անճեւացիի համաձայն, սուրբ պատարագի ընթացքին կատարուած սուրբերու յիշատակութիւնը՝ դոհարանական հանդամանք մը ունէր, ինչպէս տեսանք նախորդ անգամ. Լամբրոնացիի համար՝ ոչ միայն դոհարանական, այլ նաեւ պաշտական խնդրուածք մըն է. բայց խնդրուածք՝ ոչ որպէսզի անոնք արքայութիւն մտնեն, այլ որպէսզի արքայութեան մէջ առատանայ անոնց աստուածադիտութեան լոյսն ու փառքը:

2. — Ապա Եղիշէին հետ կ'ընդունի նրնջեցեալներու դասակարգ մը, որոնց համար օգուտ չունի պատարագը, որովհետեւ չկայ անոնց համար թողութիւն. ծանրապէս յանցապարտ մեղաւորներ են ատոնք. անոնց համար չկայ դարձի յոյս:

Կայ ննջեցեալներու երրորդ դասակարգ մը. մեղապարտ՝ բայց զղջացեալ եւ ոչ տակաւին լիով ապաշխարած հոգիներն են

ատոնք, որ նեղութեան եւ տառապագին վիճակի դատապարտուած են. ահա ասոնց ի նպատակ կը կատարուին յիշատակութիւններ սուրբ պատարագին մէջ:

3. — Լամբրոնացիի նորութիւնը՝ պայքարն է ընդդէմ սխալ ու ծայրայեղ ըմբռնումներու. (այդ ծայրայեղ հոսանքն ինքնին ապացոյց մըն է թէ սուրբ պատարագը, հինէն ի վեր, կը մատուցուէր նաեւ ննջեցեալներու ի նպատակ): ԺԲ. դարուն անջան ընդհանրացած էր այդ սովորութիւնը, որ կը կարծէին թէ սուրբ պատարագը ննջեցեալներու համար միայն կը մատուցուի: Լամբրոնացի, հերքելու համար աղանդամոլ այս ըմբռնումը՝ որուն հետեւանքով՝ ծայր էր տուած զեղիս ու անապաշխար վեանքը շատերու մօտ, ինչպէս նաեւ վաճառահաւթեան մտայնութիւն մը՝ պատարագներ գնելու՝ կը ծանրանայ զխաւորարար սուրբ պատարագին տիեզերական արդիւններուն վրայ, ցոյց տալով թէ նախ եւ առաջ պատարագը կը մատուցուի ողջերու համար՝ ինչպէս կը յայտնեն բոլոր աղօթքները: Հուսկ կը խարաղանէ դանոնք որ կը կարծեն թէ ինչ մեղք ալ գործեն՝ միշտ կրնան թողութեան արժանանալ յետ մահու՝ սուրբ պատարագին արդիւնքով. ասոնց դէմ է որ կը դռէ թէ յետ մահու չկայ թողութիւն, թէ պատարագը չէ վարելի գնել, չէ կարելի սահմանափակել անոր տիեզերական արդիւնքը, որ միշտ համայն աշխարհի վրայ կը բաշխուի:

Պօղոս Տարօնեցիի օրով, ինչպէս նախորդ յօդուածով նկատեցինք, աղանդաւորներ կային, Թոնդրակեցիները, որոնք կ'ուրանային սուրբ պատարագին աղբեցութիւնը ննջեցեալներու վրայ. որով Տարօնեցին կը ծանրանար այս կէտին վրայ: Ապա, Լամբրոնացիի օրով, աղանդաւորներ կը յայտնուին՝ որոնք պատարագը վասն ննջեցեալ միայն կը համարին. այս անգամ Լամբրոնացին է որ կը բողոքէ, այս երկրորդ ծայրայեղութեան դէմ. եւ անշուշտ դարձանալի չէ՝ թէ յաճախ ծանրանայ կէտերու վրայ, որոնք

20. Անդ, էջ 175:

21. Անդ, էջ 176:

22. Անդ, էջ 177:

23. Անդ, էջ 406:

սուրբ պատարագին վասն կենդանեաց (ողջերու համար) մատուցումը չեղտեն:

4. — Երկրորդ նորութիւնը՝ բանաձեւի սեղմումն է. ըստ Լամբրոնացիի, սուրբ պատարագը չի մատուցուիլ յանուն նրնջեցելոյն, այլ մի միայն յանուն Աստուծոյ. «յանուն» բանաձեւը ինք կը հասկընայ միշտ «ի փառս» կամ «ի պատիւ» իմաստով. եւ այս տեսակէտով իրաւունք ունի: Այս էր նաեւ Լամբրոնացիի նախորդներուն միտքն ալ. որոնք թէեւ կ'ընդունէին «յանուն նրնջեցելոյ» բանաձեւն ալ, սակայն ուրիշ իմաստով, այն է՝ ի նպատակ, ի շահ, ի փրկութիւն, վասն, ինչպէս տեսանք Եղիշէի, Նարեկացիի, Պօղոս Տարօնեցիի քով:

Որով չկայ հակասութիւն ընդմէջ Լամբրոնացիի եւ իր նախորդներուն: Ս. Պատարագը միշտ եւ ամէնուն քով՝ կը մատուցուի յանուն Աստուծոյ, յանուն Ամենասուրբ Երրորդութեան:

5. — Հետեւաբար Լամբրոնացիի համար, Ս. Պատարագը միշտ բոլորին համար է որ կը մատուցուի, ամէն դասակարգէ կարօտեալներու, մանաւանդ ողջերու համար. բայց յատուկ եւ ուշադրաւ տեղ ունի ննջեցեալներու յիշատակութիւնը (որուն համար նուիրատուութիւններ ալ կրնան ու պէտք են կատարուիլ՝ առանց ծայրայեղութեան). եւ այդ յիշատակութիւնը շատ աղբու եւ հզօր է՝ ի նպաստ ննջեցեալին, երբ բարեհաւատ եւ զղջացեալ վախճան մը ունեցած է: Այս իմաստով, սակայն, կրնայ ըսուիլ, նաեւ ըստ Լամբրոնացիի՝ թէ սուրբ պատարագը կը մատուցուի ննջեցեալի մը համար: Յիշատակեցինք վերեւ Լամբրոնացիի մէկ բանաձեւը. «Աղօթք եւ պատարագ ի փրկութիւն մեռելոց»:

Ահա ուրեմն Լամբրոնացիի խորացումը. խուսափել երկու ծայրայեղութիւններէ եւ գիտնալ արժէքաւորել ամէն ինչ առարկայով, առանց չափազանցութիւններու:

6. — Կայ սակայն վերջին կէտ մը, զոր Լամբրոնացի կու գայ յիշատակել, ինչպէս Շնորհալին: Պատարագի արդիւնքով՝ վե-

րոյիչեալ ննջեցեալները կ'աղատին նեղութիւններէ եւ տառապանքներէ եւ կը մտնեն Աբրահամու գոգը, երկինք: Արդի բառերով կամ համապատասխան եզրներով՝ պիտի ըսենք թէ սուրբ պատարագի արդիւնքով՝ ներելի մեղքերով ծանրաբեռնուած հոգին կ'աղատի տանջարանէ մը, կ'աղատի կապանքներէ, խաւարէ. աւելի պարզ՝ կ'աղատի քաւարանէն:

Ահա այսպէս, ԺԲ. դարուն, մեր եկեղեցական երկու մեծագոյն հեղինակները, Շնորհալի ու Լամբրոնացի, հայրապետ եւ հովուապետ, կաթողիկոս եւ եպիսկոպոս, կու գան հաւաստել շատ յայտնի կերպով՝ թէ Հայաստանեայց Եկեղեցւոյ վարդապետութեան մաս կազմած է քաւարանի գոյութիւնը. այդ կը պահանջեն «Յաճախապատում»էն ի վեր մեր քաղած վկայութիւնները, որոնք երբեք չեն կրնար լրիւ լուսարանուիլ ուրիշ բռնադրօսիկ մեկնութիւններով. բնական պատճառաբանութիւնը կու գայ յանդիլ քաւարանի գոյութեան: Ահա թէ ինչո՞ւ մեր նախարանին մէջ յայտարարեցինք թէ «Պատարագ վասն ննջեցելոց» խնդիրը սերտօրէն աղերս ունէր քաւարանի վարդապետութեան հետ: Դարերու հետ քալելով, ահա ԺԲ. դարու երկու փարոսներու լոյսին տակ կը յըստակուին նախորդ բոլոր ըսուածները եւ կ'առնեն բնական մեկնաբանութիւն: Աղօթք եւ պատարագ ի նպաստ ննջեցելոց՝ կ'ենթադրեն քաւարանի գոյութիւնը:

Դառնալով մեր բուն նիւթին, կ'երբայեցենք թէ Գարեգին Պօրք. Սաշատուրեան կաշկանդուեր է Լամբրոնացիի վարդ մը խօսքերէն, եւ հարցը նկատուի է միակողմանի իմաստով մը. ասիկա ամէնէն մեղմ մեկնութիւնն է զոր կրնանք տալ: Սակայն հարցին պէտք է մօտենալ աւելի ամբողջական հայեցակէտով, նկատի առնելով նաեւ մեր Եկեղեցւոյ բոլոր միւս վարդապետներուն ըսածները, եւ ջանալով որոնել անոնց համադրութիւնը, ինչպէս կը յուսանք կատարած ըլլալ:

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԵՐ ՆԵՐՍԷՍԵԱՆ
(Շարունակելի)

ՊԱՏԱՍԻԱՆ

ՀԱՍՈՒ ԳԻՏ. ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹԻ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԵԱՆ

ԳՈՐԳԱՐՈՒԵՍՏԻ ՄԱՍԻՆ

«Բազմավէպ»ի 1958 տարւոյ թիւ 3-5ին մէջ իմ գրախօսականս՝ Վ. Ս. Թեմուրճեանի Գորգագործութիւնը Հայաստանում, (Երեւան, 1955), նիւթ եղեր է քննադատութեան մը, Հայ. ՍՍՌ Գիտ. Ակադ. պաշտօնաթերթ «Տեղեկագիր»ի 1959 Մարտի թիւին մէջ հրատարակուած: Գրախօսականիս դէմ այս քննադատութիւնը զարմանալիօրէն չէ ստորագրուած թեմուրճեանէ, այլ Երեք գրողներէ, Դ. Վարդումեան, Ա. Աւդալ, Կ. Մելիք-Փաշայեան: Հաւանաբար պատիւ նկատելու եմ, որ երեք «քննադատներու» հաւաքական կարողութեան պէտք է եղեր մէկ գրախօսականս քննադատելու համար: Սակայն դժբախտաբար այս «քննադատականը» իր խորքով եւ ձեւով ինծի կը զլանայ այդ զոհունակութիւնը, նկատելով որ «քննադատականին» չէր արժեր ոչ տեղ տալ «Տեղեկագիր»ի պէս լուրջ պաշտօնաթերթի մը մէջ, եւ նոյնիսկ մէկ ստորագրութիւն չոսյլութիւն խել էր:

Գրախօսականիս «քննադատութեան» մէջ ինծի կը վերագրուի «ակնյայտնի միտումնաւորութիւն», «չահախնդիր կողմնակալութիւն» եւն.: Այս վերագրումները աւելի լաւ է որ քննադատ Երրորդութիւնը իրեն վերապահէ, դատելով «քննադատութեան» իրապէս յերկրածոյ եւ խեղաթիւրեալ բնոյթէն: Իսկ թէ իմ գրախօսականներս եղած են անկեղծ եւ առարկայական, առանց որեւէ յետին միտումի, նոյնիսկ խնդրոյ նիւթ Թեմուրճեանի գրախօսականը կրնայ պարզ ցոյց տալ: Թեմուրճեան բոլորովին անձանօթ ալ: Ինչո՞ւ իրր անձ: Նոյնիսկ այդ կամ կին ըլլալը չեմ գիտեր, եւ ոչ ալ կը հե-

տաքրքրուիմ: Ես լուրջ վերոյիշեալ գիրքը նկատի ունեցած եմ: Եթէ գրախօսականս նոյնիսկ խստութեան գիծ մը ունի, ատիկա պէտք է վերագրել լուրջ գրքին ընդվզեցուցիչ ոճին ու բնոյթին, մասնաւորաբար աններելի՝ մշակութային նիւթերու պրպտման նուիրեալ գործերու մէջ: Այս իսկ պատճառաւ այդ գրախօսականս եղածին պէս կը հաստատեմ հիմակ ալ: Ուրեմն հոս գրախօսականիս պաշտպանողականը չէ որ պիտի ընեմ, որուն կարիքը չեմ տեսներ, այլ ասիկա պատասխանս է «քննադատ» երրորդութեան, որոնք աններելի մեղանշումներ կ'ընեն քննադատութիւն պիտակին տակ պարտկիլ ջանալով, մեղանշումներ ճշմարտութեան, իրականութեան դէմ:

Թեմուրճեան, սովորական յանկերգով մը, զորդի մասին գրող արտասահմանեան հայ կամ օտար գրողներուն ձրիաբար կը վերագրէ «բուրժուական քննադատների նենգամտութիւն», առանց որեւէ ցուցմունքի եւ ապացոյցի: Ասիկա պաշտպանելու մտադրութեամբ «քննադատները» յառաջ կը բերեն Արթըր Ափհամ Բօրի դէմ «Բազմավէպ»ի 1930 թուականի թիւերուն մէջ իմ քննադատութիւնս եւ պատասխանս, որ գրած եմ Բօրի մասին «առանց հարեւանցի ծանօթութեան... առանց մէկ փաստի, երեւակայութեան մղեալ...»: Իրապէս արտառոց է որ երեք քննադատները այս խօսքերս նկատեն ուրիշ բան՝ բացի Բօրին վերագրուած տգիտութենէ, մինչ անոնք զարմանալիօրէն այդ խօսքերս կը վերծանեն «բուրժուական քննադատների նենգամտութիւն...»: Ես ասիկա պարզապէս խոշոր եւ կամուր մեղան-